Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու
2024թ.դեկտեմբերի 25-ի N 136-Ն որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ կետի և 83-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով:

Նախագծի ընդունումը իրավական ուժ է հաղորդում 2025 թվականի համայնքի գլխավոր ֆինանսական փաստաթղթին, կարգավորում է համայնքի 2025 թվականի եկամուտների, ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգումների ձևավորումը և հատկացումը: **Համայնքի ավագանու որոշման ընդունման նպատակն է** «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքներով սահմանված պահանջների իրականացումը և ապահովումը:

Իրավական ակտի ընդունումը նպատակ է հետապնդում ղեկավարվելով համապատասխան դաշտը կարգավորող օրենքների պահանջներով ֆինանսական հատկացումներ կատարել հնգամյա և միջնաժամկետ ծախսերի առանցքային նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման համար:

Այժմ նույն ոլորտը կարգավորվում է Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 23-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 18 -Ն որոշմամբ:

Աշխատակազմի գլխավոր
մասնագետ-հաշվապահ՝ _____ Ա.Ղարագյոզյան